բերկրումն էին, եւ ազգակիցս մեր եւ հաւատակիցս փափաքին՝ եթէ եւ մեք եւս ուրախանամք. եւ յայս հասին, զի Ուրբաթ էր օրս եւ պահք հաստատեալ ի սրբոց երեսփոխանաց Քրիստոսի, վասն որոյ այսմ ա-նօրէնութեանցս մեր զամենայն պատիժ և զամենայն խռովութիւն յազգացս մեր և թէ յայլոցն ահա կրեմք, զոր և ապագայն Քրիստոսի է գիտելի. յորոց և յայլ չարագոյն պատժոց եւ յամենայն յորոգայթից չարին փրկեսցէ Քրիստոս Աստուած մեր զամենայն հաւա-տացեալս անուան իւրոյ, մանաւանդ զԱրմէնազինս և զուղղափառ Լուսաւորչադաւանս՝ պահելով յօրէնս սուրբս եւ յուահս Լուսաւորչին մերոյ. ոչ յայլ եւ ոչ յահեակ խոտորելով, հանելով ի գլուխ ուահին՝ ի վե-րինն յերուսաղէմ ի սուրբ արքայութիւնն, ուր հա-ճոյացեալ նախնիքն մեր՝ հրճուեալ բերկրին. ընդ նո-սին դասաւորեալ մեծաւ փառօք պսակեսցէ ըստ ան-սուտ բանին իւրոյ։ Եւ եւս զտիզմնաթաւալս և ի ճա-նապարհէն արքունական անկեալ գծողս բանի ընդ ձեօք հանդերձ վեր առեալ յերամս նոցին խառնեալ՝ ի հանգիստ գլխոյն և ի լոյս հանցէ գթածն և ամէնո-ղորմ բարերար ստեղծողն մեր՝ բարեխօսութեամբ և հայցմամբ Մօր Սուրբ Կուսին, և գլխոյն մեր բազմա-չարչար Սուրբ Հօրն խնդրուածովք։ Ասասցեն երկինք և երկիր՝ Եղիցի՛ եղիցի։

Կիրակի ԻԹ-իս մեր Վարդապետն ի յԱստուածա-ծին ծանուցում արար ժողովրդեանն վասն գերէտեառն՝ Պալչխցի Մղտեսուն, որ Թաթարն գերեցուցեալ զկին և զորդիսն և ի փող կտրեալ, զի փողն բերցէ և դար-ձուսցեն զգերիքն առ տէրն. և սա եկեալ ասաց ի քա-ղաքս մեր, և ետ Վարդապետն մեր գիր զի յամե-նայն եկեղեցիս երթեալ ողորմութիւն գտցէ։ Եւ օրս յԱստուածածին ինքն արար զբան եւ զխեղճութիւն նմին ծանուցում և ՃՂուռուչ անկաւ անդ. վասն ո-